Լոս Անջելես մարզի Հանրային սոցիալական ծառայությունների վարչություն

Կորոնավիրուսի համաճարակի ընթացքում հաճախակի տրվող հարցեր
(Frequently Asked Questions - FAQs)

Ընդհանուր հարցեր

1. Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի COVID-19 (Կորոնավիրուս) համաճարակի ընթացքում իմ՝ CalFresh, CalWORKs, General Relief, Փախստականների դրամական օգնության (Refugee Cash Assistance) կամ Ներգաղթածների դրամական օգնության (CAPI) ծրագրի դադարեցումը կանխեմ:

   Եթե ցանկացած որևէ ծրագրով DPSS-ի հետ ունեք ակտիվ գործ, հարկ չկա ներկայացնել SAR-7-ը, QR-7-ը կամ տարեկան վերավավերացումը 2020 թվականի մարտ, ապրիլ կամ մայիս ամիսներին: Անհրաժեշտ չէ գրասենյակ զանգահարել, քանի որ ձեր նպաստները չեն դադարեցվելու: Բաժանմունքը ձեզ կտեղեկացնի, թե երբ կպահանջվի վերահաստատումը անցկացնել: Ձեր նպաստները կշարունակվեն նախնական չափով, եթե չունեք պարտադիր զեկույց, ինչպիսին է եկամուտների մասին հաղորդման շեմը գերազանցող եկամուտը կամ եկամտի կորուստը, որը կհանգեցնի լրացուցիչ նպաստների:

2. Արդյո՞ք սա նշանակում է, որ ես կարիք չունեմ SAR-7-ը կամ վերավավերացման փաթեթը ներկայացնել:

   Եթե ձեր SAR-7- ի կամ թարմացման ժամկետը լրանում է 2020 թվականի մարտ, ապրիլ կամ մայիս ամիսներին, ապա ներկայացնել հարկավոր չէ, քանի որ ձեր նպաստները կշարունակվեն առանց որևէ ընդհատման:

3. Ի՞նչ է պատահել, եթե ես չեմ ներկայացրել իմ փետրվար ամսվա SAR-7/QR-7-ը:

   Եթե ձեր Հաշվետվության ամիսը հունվարն էր և ձեր SAR-7-ը նախատեսված էր փետրվարին, ձեր գործը կարճվել է, հետևաբար դուք պետք է նորից դիմեք նպաստների: Եթե ձեր հաշվետվության ամիսը փետրվարն էր, իսկ ձեր SAR-7-ը նախատեսված էր մարտին, ապա դուք ազատվում եք մարտ ամսին SAR-7 ներկայացնելուց: Մարզպետի գործադիր հրամանը միայն անտեսում է այն SAR-7-ները, որոնց ժամկետները 2020 թվականի մարտ, ապրիլ և մայիս ամիսներն են:

4. Ի՞նչ կարող եմ անել, եթե իմ գործը ներկայումս դադարեցված է:

   CalFresh-ի և CalWORKs-ի այն գործերը, որոնք դադարեցվել են 2020 թվականի մարտ, ապրիլ կամ մայիս ամիսներին կայանալիք SAR-7 զեկույցի կամ վերավավերացման արդյունքում, կվերաբացվեն: Եթե ձեր նպաստների վերցնելու օրը, ձեր նպաստները չեք ստանում, դիմեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-866-613-3777 համարով, երկուշաբթիից-ուրբաթ, առավոտյան 7: 30-ից մինչև երեկոյան 5:30-ը:

5. Ես կորցրել եմ իմ EBT քարտը, ինչպե՞ս ստանամ փոխարինող քարտ:

   Նոր քարտ պահանջելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-866-613-3777 համարով, երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան 7: 30-ից մինչև երեկոյան 5:30-ը: Եթե անօթևան եք, ձեր նոր քարտը կարող է ուղարկվել ժամանակավոր հասցեով կամ քարտը ստանալու համար ձեզ կտրվի ժամադրություն, ձեր մոտակա DPSS-ի շրջանային գրասենյակում:

Ձեր նոր EBT քարտը գրանցելու համար, խնդրում ենք դիմեք EBT հաճախորդների սպասարկման ծառայությանը՝ (877) 328-9677 հեռախոսահամարով:

6. Ի՞նչ անել, եթե ես կորցրել եմ եկամուտս, կարո՞ղ եմ հայտնել փոփոխությունը՝ իմ նպաստները ավելացնելու համար:

   Այո: Պարզապես զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն և հայտնեք ձեր եկամտի կորստի մասին և իրավասություն հաստատող աշխատողը (EW) կվերագնահատի ձեր գործը:

7. Հայցադիմում ներկայացնելուց հետո, որքան պետք է սպասեմ, որպեսզի իմ դիմումի կարգավիճակի վերաբերյալ տեղեկություն ստանամ:

   Ձեր դիմումը մշակելու համար վարչությունն ունի 30 օր: Այնուամենայնիվ, եթե ընտանիքը իրավասու է CalFresh նպաստների Արագացված ծառայության կամ CalWORKs-ի Անհապաղ անհրաժեշտության, ձեր գործը կարող է հաստատվել շատ ավելի շուտ:

CalFresh

1. Ինչպե՞ս խթանիչ վճարը կազդի CalFresh-ի գործի վրա:

   Միայն մեկ անգամ տրամադրվող խթանիչ վճարումը չի ազդի ձեր CalFresh գործի վրա, քանի որ այն չի համարվում եկամուտ:

2. Եթե գործազրկություն ստանամ, դա կազդի՞ իմ CalFresh-ի գործի վրա:

   Այո, գործազրկությունը համարվում է եկամուտ և կազդի ձեր CalFresh գործի վրա:

3. Ես ստացել եմ CalFresh-ի վերավավերացման փաթեթ ապրիլ ամսվա համար: Արդյո՞ք ես պետք է ներկայացնեմ փաթեթը և արդյո՞ք իմ նպաստները կդադարեցվեն:

   Ոչ, CalFresh-ի վերավավերացման փաթեթը ներկայացնելու հարկ չկա: Այս փաթեթները ուղարկվել են փոստով, նախքան այս պահանջը մերժելու նահանգային հրաման ստանալը: Դուք կշարունակեք ստանալ ձեր 2020 թվականի ապրիլ և մայիս ամիսների նպաստները:

4. Ես նպաստ ստանալու հայց ներկայացնելու խնդիր ունեմ, ի՞նչ պետք է անեմ:

   Կարող եք դիմել մեր Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (866) 613-3777 հեռախոսահամարով, երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան 7: 30-ից մինչև երեկոյան 5:30-ը:

5. Արդյո՞ք CalFresh-ի մասնակիցները կստանան լրացուցիչ CalFresh նպաստներ:

   Այո: Ակտիվ CalFresh ընտանիքները կստանան երկու արտակարգ իրավիճակի վճարներ, որոնք 2020 թվականի ապրիլ և մայիս ամիսներին ավտոմատ կերպով կուղարկվեն իրենց EBT քարտին: Ընտանիքները կունենան իրենց CalFresh նպաստների ավելացում մինչև իրենց ընտանիքի չափի առավելագույն նպաստի գումարը: Մարտի ավելացումը կտրամադրվի 2020 թվականի ապրիլի 12-ին, իսկ ապրիլ ամսվա նպաստը կտրվի 2020 թվականի մայիսի 10-ին:

6. Արդյո՞ք արտակարգ իրավիճակի վճարումը հիմնված կլինի այն բանի վրա, թե քանի հոգի են CalFresh դիմումատու ընտանիքի մաս, նույնիսկ եթե ոմանք իրավասու չեն CalFresh նպաստների համար:

   Ոչ: Արտակարգ իրավիճակի վճարման արժեքը որոշելիս հաշվի կառնվեն ընտանիքի միայն այն անդամները, որոնք CalFresh նպաստ ստանալու իրավունք ունեն:
   .

7. CalFresh ստացողի ո՞ր տեսակն է ստանալու արտակարգ իրավիճակի վճար:

   Արտակարգ իրավիճակի վճարումը կատարվում է միայն CalFresh-ի կանոնավոր դեպքերի համար: Անցումային սննդի նպաստների (Transitional Nutrition Benefit-TNB) ծրագրից օգտվողները չեն ստանում CalFresh, հետևաբար նրանք չեն ստանա արտակարգ իրավիճակի վճար:

CalWORKs

1. Ինչպե՞ս կարող են CalWORK- ի մասնակիցները դիմել անօթևանի նպաստների համար:

   Անօթևանի նպաստների դիմելու համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ (866) 613-3777 հեռախոսահամարով, երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան 7: 30-ից մինչև երեկոյան 5:30-ը: Ներկայացուցիչը հայց կներկայացնի, որպեսզի ձեր խնդրանքի վերաբերյալ իրավասության աշխատակիցը ձեզ հետ հեռախոսով կապ հաստատի:

   Իրավասության աշխատակիցը հեռախոսով ձեր անունից կլրացնի անօթևանի նպաստների դիմումը: Համոզվեք, որ հաճախորդների ծառայության ներկայացուցչին տրամադրել եք լավ հեռախոսահամար, որով հնարավոր կլինի ձեզ հետ կապնվել:

2. Արդյո՞ք DPSS-ն իրականացնում է տնային այցեր CalWORK-ի հաճախորդների համար:

   CalWORK-ի նպաստներ ստանալու համար տնային այց չի իրականացվում/ պահանջվում: Եթե ձեր իրավասու լինելու որոշման համար անհրաժեշտ լինի տեղեկատվություն, ձեզ հետ կկապնվեն հեռախոսով:

General Relief

1. Կասեցվելու՞ են GR- ի ժամկետները:

   GR-ի նպաստները ժամկետների սահմանափակման պատճառով չեն դադարում 2020 թվականի մարտ, ապրիլ կամ մայիս ամիսներին:

2. Արդյո՞ք GR հաճախորդները և SSI ստացողները խթանիչ փաթեթի արդյունքում լրացուցիչ դոլարներ կստանան:

   Մենք տեղյակ չենք այս նպաստների ծրագրերին հատկացվող խթանման վճարների մասին:

3. Արդյո՞ք GR-ի անգործունակ կարգավիճակը կշարունակվի ինքնաբերաբար:

   Ոչ: Այս կարգավիճակի համար ավտոմատացված երկարացում չկա: Եթե շուտով ձեր գործազրկության կարգավիճակը լրանում է և դժվարանում եք ձեռք բերել երկարացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, դիմեք մեր Հաճախորդների սպասարկման կենտրոն՝
   (866) 613-3777 հեռախոսահամարով:

4. Ինչո՞ւ են դադարեցվել իմ Ընդհանուր օգնության նպաստները, երբ ես դրանք 12 ամիսներից միայն 9 ամիսների ընթացքում եմ ստացել:

   GR նպաստները, որոնք դադարեցվել են «ժամկետների սահմանափակման» հետևանքով, 2020 թվականի մարտ, ապրիլ և մայիս ամիսների համար կվերաբացվեն:

Immigration

1. Ի՞նչ օգնություն, եթե այդպիսին կա, առաջարկվում է այն փաստաթղթեր չունեցող ծնողներին, որոնք աշխատանքի կորստի պատճառով այլևս չեն կարողանում իրենց երեխաներին ապահովել:

   Կարող եք դիմել CalWORK-ի (դրամական օգնություն) և CalFresh-ի (սննդի նպաստների) համար, եթե երեխաներից առնվազն մեկը ԱՄՆ քաղաքացի է կամ ունի ներգաղթի իրավասու կարգավիճակ:

   Կարող եք դիմել առցանց՝ այցելեք «Ձեր ներկա նպաստները» (YBN) կայքէջը՝ www.dpss.lacounty.gov և սեղմեք YBN լոգոն: Կարող եք նաև զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն (CSC)՝ (866) 613-3777 հեռախոսահամարով, երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան 7: 30-ից մինչև երեկոյան 5:30-ը:

   Եթե դուք արդեն ստանում եք CW և (կամ) CF, զանգահարեք CSC-ին՝ եկամտի կորստի մասին տեղեկացնելու համար, որպեսզի ձեր նպաստները վերահաշվարկվեն և հնարավոր լինի լրացուցիչ նպաստներ ստանալ:

Medi-Cal

1. Ինչպե՞ս է ազդելու խթանման վճարը Medi-Cal-ի գործի վրա:

   Այս պահին մենք չգիտենք, թե ինչպես կազդի այդ եկամուտը: Մենք սպասում ենք Առողջապահության ծառայության վարչության ցուցումներին:

2. Ի՞նչ պետք է անեմ, եթե ես առողջության ապահովագրություն եմ ստանամ Covered California-ի միջոցով, բայց ես ի վիճակի չեմ վճարումներ կատարել, քանի որ իմ եկամուտը նվազել է: Կարո՞ղ եմ դիմել Medi-Cal-ին:

   Դուք կարող եք հաղորդել ձեր եկամտի փոփոխության մասին ձեր Covered California հաշվի միջոցով՝ https://www.coveredca.com/members/creating-an-online-account/: Եթե դուք այլևս իրավասու չեք Covered California-ի միջոցով առողջության ապահովագրական ծածկույթի, ձեր գործն ավտոմատ կերպով կփոխանցվի DPSS, որտեղ Medi-Cal-ի համար կանցկացվի իրավասության գնահատում:

3. Եթե ես ստանում եմ Medi-Cal-ի նորացման փաթեթավորում 2020 թվականի մարտ, ապրիլ կամ մայիս ամսվա ընթացքում, կարո՞ղ եմ այն ուղարկել փոստով, քանի որ հասկանում եմ, որ այս 90-օրյա ժամկետում նպաստները չեն դադարեցվի:

   Այո, խնդրում ենք ներկայացնել ձեր նորացման փաթեթը, որպեսզի երբ դադարեցման ժամկետը վերացվի, ձեր նպաստները չդադարեն: Կասեցման ժամկետը լրանալուց հետո, եթե դուք չեք ներկայացրել ձեր նորացման փաթեթը, ձեր նպաստները կդադարեցվեն:

In Home Supportive Services (IHSS)

1. Արդյո՞ք Լոս Անջելեսի մարզը կտրամադրի իրական IHSS կողմնորոշումներ:

   Լոս Անջելեսի մարզը աշխատում է, որ խնամակալների կողմնորոշման տեսանյութերը առցանց հասանելի լինեն նոր խնամակալներին:

2. Արդյո՞ք DPSS-ը տնային այցեր իրականացնում է IHSS-ի սպառողների համար:

   Նահանգը ժամանակավորապես դադարեցրել է IHSS-ի ներկայիս սպառողների համար պահանջվող տարեկան տնային այցը: Անտեսման այս ժամանակահատվածում սոցիալական աշխատողները (SW) կկատարեն տարեկան վերագնահատումներ հեռախոսային հարցազրույցի միջոցով: Բացի այդ, եթե սպառողը չի ստանում CalFresh նպաստ, SW-ն կհարցնի սպառողներին, թե արդյոք նրանք CalFresh-ի դիմելով օգնության կարիք ունեն:

   Նահանգը չի հրաժարվել տնային այցից՝ IHSS ծառայություններ ստանալու համար դիմող նոր սպառողների համար: Նոր սպառողների համար SW-ն հեռախոսով կստանա որոշակի տեղեկատվություն և կնշանակի տնային այց:

3. Եթե իմ գնահատումը ժամանակին չի իրականացվել, արդյո՞ք իմ ծառայությունները կդադարեցվեն:

   Ոչ, ծառայությունները չեն դադարեցվելու, եթե վերագնահատման հարցազրույց չի իրականացվել մինչև վերագնահատման ամսվա ավարտը: Նահանգը հետաձգել է բացասական գործողությունները մինչև 2020 թվականի հունիսը: Սոցիալական աշխատողները վերագնահատումները իրականացնում են հեռախոսով: IHSS օգնության գծի աշխատակիցները օգնություն են տրամադրում երկուշաբթիից - ուրբաթ, առավոտյան 8: 00-ից մինչև երեկոյան ժամը 5: 00-ը՝ (888) 822-9622 հեռախոսահամարով: